

Խ-112¹-18.04.2019-ԱԱ-011

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**

**«ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ (ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ) ԵՎ
ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ
ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հոդված 1. «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության 2005 թվականի հուլիսի 08-ի ՀՕ-164-Ն օրենքը լրացնել նոր 21.1-ին հոդվածով՝

«Հոդված 21.1. Հաշմանդամություն ունեցող անձիք արհեստագործական և միջին մասնագիտական կրթության և ուսուցման համակարգում

1. Ընդունելության քննությունները դրական գնահատականներով հանձնած 1-ին, 2-րդ կամ 3-րդ խմբի հաշմանդամություն կամ հաշմանդամ երեխայի կարգավիճակ ունեցող անձիք ընդունվում են պետական արհեստագործական և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների անվճար համակարգ՝ վճարովի համակարգի համար առնվազն անցումային միավորներ հավաքելու դեպքում:

2. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված հիմքերով պետական արհեստագործական և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների անվճար համակարգում սովորող 1-ին, 2-րդ կամ 3-րդ խմբի հաշմանդամություն ունեցող անձիք տեղափոխվում են տվյալ ուսումնական հաստատության վճարովի համակարգ, եթե ուսումնառության ընթացքում կատարված բժշկասոցիալական վերափորձաքննության արդյունքներով չեն ճանաչվել հաշմանդամություն ունեցող անձ:

3. Պետական արհեստագործական և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների վճարովի համակարգում սովորող անձիք ուսումնառության ընթացքում հաշմանդամ երեխայի կամ 1-ին, 2-րդ կամ 3-րդ խմբի հաշմանդամություն ունեցող անձի կարգավիճակ ստանալու դեպքում տեղափոխվում են տվյալ ուսումնական հաստատության անվճար համակարգ:

4. Պետական արհեստագործական և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններ ընդունված 1-ին, 2-րդ և 3-րդ խմբի հաշմանդամություն և հաշմանդամ երեխայի կարգավիճակ ունեցող անձանց ուսուցման ծախսերը կատարվում են պետական բյուջեի միջոցների հաշվին: Նրանց թվից ցերեկային ուսուցման հաշմանդամություն ունեցող անձանց, հերթական քննությունները և ստուգարքները դրական գնահատականներով հանձնելու դեպքում, վճարվում է կրթաթոշակ՝ անկախ ստացվող նպաստից կամ թոշակից:»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ (ԱՐՎԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ) ԵՎ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության 2005 թվականի հուլիսի 08-ի ՀՕ-164-Ն օրենքը լրացնել նոր 21.1-ին հոդվածով՝

«Հոդված 21.1. Հաշմանդամություն ունեցող անձիք արհեստագործական և միջին մասնագիտական կրթության և ուսուցման համակարգում

5. Ընդունելության քննությունները դրական գնահատականներով հանձնած 1-ին, 2-րդ կամ 3-րդ խմբի հաշմանդամություն կամ հաշմանդամ երեխայի կարգավիճակ ունեցող անձիք ընդունվում են պետական արհեստագործական և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների անվճար համակարգ՝ վճարովի համակարգի համար առնվազն անցումային միավորներ հավաքելու դեպքում:

6. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված հիմքերով պետական արհեստագործական և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների անվճար համակարգում սովորող 1-ին, 2-րդ կամ 3-րդ խմբի հաշմանդամություն ունեցող անձիք տեղափոխվում են տվյալ ուսումնական հաստատության վճարովի համակարգ, եթե ուսումնառության ընթացքում կատարված բժշկասոցիալական վերափորձաքննության արդյունքներով չեն ձանաչվել հաշմանդամություն ունեցող անձ:

7. Պետական արհեստագործական և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների վճարովի համակարգում սովորող անձիք ուսումնառության ընթացքում հաշմանդամ երեխայի կամ 1-ին, 2-րդ կամ 3-րդ խմբի հաշմանդամություն ունեցող անձի կարգավիճակ ստանալու դեպքում տեղափոխվում են տվյալ ուսումնական հաստատության անվճար համակարգ:

8. Պետական արհեստագործական և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններ ընդունված 1-ին, 2-րդ և 3-րդ խմբի հաշմանդամություն և հաշմանդամ երեխայի կարգավիճակ ունեցող անձանց ուսուցման ծախսերը կատարվում են պետական բյուջեի միջոցների հաշվին: Նրանց թվից գերեկային ուսուցման հաշմանդամություն ունեցող անձանց, հերթական քննությունները և ստուգարքները դրական գնահատականներով հանձնելու դեպքում, վճարվում է կրթաթոշակ՝ անկախ ստացվող նպաստից կամ թոշակից:»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒ ՎՃՄԱՆԴԱՄՆԵՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Խ-112-18.04.2019-ԱԱ-011/1) ԵՐԿՐՈՐԴ ԸՆԹԵՐՑՄԱՆ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԵՐԿԱՅԱՑԿԱԾ ԱՌԱՋԱՐԿԻ

ԱՌԱՋԱՐԿԻ ՀԵՂԻՆԱԿԸ	ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԻԾԸ ԿԱՄ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՄԱՍԸ	ԱՌԱՋԱՐԿԸ	ԱՌԱՋԱՐԿՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԿԱՄ ՄԵՐԺԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԵՂԻՆԱԿԻ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԸ	ԱՌԱՋԱՐԿՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԿԱՄ ՄԵՐԺԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄԸ
ՀԵՐԻՔՆԱԶ ՏԻԳՐԱՆՅԱՆ ԳՐԱԿՈՐ ԱՌԱՋԱՐԿ	«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒ ՄՍՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԻԾ (Խ-112-18.04.2019-ԱԱ-011/1)	«Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծով հաշմանդամություն ունեցող անձանց համար սահմանված անվճար ուսման արտոնությունները անհրաժեշտ է ամրագրել մասնաճիտական (արհեստագործական) և միջին մասնաճիտական կրթության մասին» և «Բարձրագույն և հետբուհական մասնաճիտական կրթության մասին» ՀՀ օրենքներում՝ դրանցում կատարելով համապատասխան փոփոխություններ և լրացումներ:	Ընդունվեց	Ընդունվեց